ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

07 դեկտեմբեր 2023թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԷԴՈՒԱՐԴ ԲԱԲԱՅԱՆԻՆ

Զեկուցագիր

Հարգելի պարոն Բաբայան,

Սույնով հայտնում եմ, որ Աբովյան համայնքի կարիքների համար գույքագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով Աբովյանի համայնքապետարանի կողմից հրապարակվել էր «ԱԲՀ-ԷԱՃԾՁԲ-24/04» ծածկագրով գնման ընթացակարգ, որի շրջանակներում մասնակիցների կողմից ստացվել են մի շարք հարցումներ, հիմնավորումներ և առաջարկություններ՝ ծառայության տեխնիկական բնութագրի և նախահաշվային գնի վերաբերյալ:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն գնման ընթացակարգը չկայացած է համարվում, երբ դադարում է գոյություն ունենալ գնման պահանջը: ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված հավելված 1-ի 58-րդ կետի համաձայն, պետության կամ համայնքների կարիքների համար կազմակերպված գնման ընթացակարգը կարող է ամբողջությամբ կամ մասնակի չկայացած հայտարարվել՝ համապատասխանաբար Հայաստանի Հանրապետության կառավարության կամ համայնքի ավագանու, այլ պատվիրատուների դեպքում՝ ընդհանուր կառավարումն իրականացնող լիազորված մարմնի ղեկավարի, իսկ հիմնադրամների դեպքում՝ հոգաբարձուների խորհրդի որոշման հիման վրա: «ԱԲՀ-ԷԱՃԾՁԲ-24/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը որոշեց դիմել Աբովյան համայնքի ավագանուն Աբովյան համայնքի կարիքների համար գույքագրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԱԲՀ-ԷԱՃԾՁԲ-24/04» ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու առաջարկով. պատասխանատու ստորաբաժանման կողմից՝ ստացված հարցումների և առաջարկությունների բովանդակության առավել մանրամասն և մասնագիտական ուսումնասիրություն իրականցնելու, հետագա ռիսկերից, տարընթերցումներից և տարըմբռնումներից խուսափելու, գնման ընթացակարգին մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման, ինչպես նաև գնման ընթացակարգի համար համայնքի բյուջեից նախատեսվող ծախսերն առավել արդյունավետ և նպատակային օգտագործելու համար:Ելնելով վերոգրյալից՝ խնդրում եմ Ձեր հանձնարարականը՝ վերոնշյալ հանձնաժողովի կազմած արձանագրության և սույն զեկուցագրի հիման վրա կազմել Աբովյան համայնքի ավագանու համապատասխան որոշման նախագիծ և այն ներառել Ավագանու առաջիկա նիստում:

Կից ներկայացվում է «ԱԲՀ-ԷԱՃԾՁԲ-24/04» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի արձանագրությունը:

Առդիր՝ 2 նիշք:

Զեկուցող՝ Արսեն Հարությունյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆԻ
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ
Մուտքագրման թիվ Ֆ-8114
«07» 12 2023 թ.